

ՀԱՅՐԵՆԻԱԿԱՆ**ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ**

Թո երզը , վարպե՛տ . հողին , քարին էլ շունչ . լեզու կտայ ,
Դու զիտես մարդու հոգին կախարդել քո անուշ խօսքով ,
Քարաւանը քո , որպէս ուզտերի անվախնան շղթայ ,
Ոշխարհի սրտում քիզ նման տրտում դօղանջով կ'երթայ :

Ուզում եմ յաւէտ գեգերել քիզ հետ , զրոյցդ լսել ,
Եմ սիրուն է կարծես այրւում սիրակէզ քո մորմոքներում ,
Ուզում եմ լսել հէքիաթը զսեմ , որ դու ես հիւսել ,
Օքնա՛նք այն ափին , որ երազելով եկել ես հասել :

Դու սիրոյ աղբիւր , Ոլագեազի բոյր , հէքիաթ գեղեցիկ ,
Դու յաւերժական մի կորին որսկան՝ հայոց լեռներում ,
Դու եղնիկների հմայրին գերի մեր մեծ Աւետիք ,
Քո սիրտը երզի , քո սիրտը վէրքի անափի հայրենիք :

ԵՐԲ ԿԸ ՏԽՐԵՍ

Երբ կը տխրես , ինձ մօտ արի ,
Գանձըս ծով է այս տարի ,
Ես քեզ կը տամ ոսկի յոյսեր
Եւ թաւուտներ անտառի :

Ես քեզ կը տամ մարգեր կանաչ ,
Աղբիւրների լոյս կարկաչ ,
Մանուկների ժպիտն անմեռ ,
Կարմիր վարդեր ու կակաչ :

Երբ կը տխրես , ինձ մօտ արի ,
Հուրըս ոչ ոք չի մարի ,
Ես քեզ կը տամ հոգու կրակ
Եւ դրօշակ պայքարի :

ԱՄՊԵՐ

Ամպե՞ր , ամպե՞ր , ճերմակ ամպեր ,
Մարգի , ծաղկի բոյրով արքել՝
Նստել եմ ծեր ստուերի տակ :

Ուզում եմ միշտ լինէք այդպէս
Ե՛ւ ծիւնաթոյր , Ե՛ւ լուսերես
Ու ծեր նեռուից անուշ ժպտաք ,

Դառնաք անձեւ , դառնաք բարիք ,
Առատ թափուէք մեր դաշտերին ,
Որպէս պարզեւ ամենաթանկ ,

Եւ ծառերին ու ծիլերին ,
Մանուկներին ու ծերերին
Չեր զովարար համբոյըը տաք :